



«ԹՈՂ ՏԱՐԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ. ԺԵ. 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1906

ԹԻՒ 12

**ՈՒՍՔԸՐ ՀՍՄԱԼՍԱՐԱՆ**

Ասիկա Ամերիկեան համալսարաններուն ամենէն խոշորներէն կամ ամենէն աւելի ճանչցուածներէն մէկը չէ, բայց մասնաւոր շահեկանութիւն ունի սա պատճառով որ անոր շքեղ շէնքերը կառուցուեցան միայն մէկ տարուան մէջ. Հաստատութիւնը երեսուն տարիէ աւելի հին է, բայց 1904ին անոր շէնքերը ամբողջ արեցան հրդեհէ, և ապահովագրութեան ստակը


նէկի տուաւ. Հաստատութիւնն ունի մատուռ մը, գրատան շէնք մը, ստեղծագիտական դիտարան մը, մարմնամարզարան մը, և շքեղ քանի մը ուրիշ շէնքեր որոնք իբրև նշարան և դասարան կը ծառայեն. Համալսարանը երիցական Եկեղեցւոյն պատկանեալ Քրիստոնէական հաստատութիւն մըն է, և երկու տարի առաջ անոր այցելող անձ մը գտաւ որ ուսանողներէն հարիւրին 97ը եկեղեցւոյ

դահլ. և անոր բարեկամներէն մէկը, անդամ Միացեալ Նահանգաց Ծերակոյտի ժողովին, Համալսարանին նուիրեց մեծ դանդակ մը և անունը դրաւ Մաքինլի Զանգակ: Պատկերին ետեւ երեսմէ բարձր ծխնելոյզը կապակցութիւն ունի տաքցնող և լուսաւորող կազմածին հետ: Կրակները, որ կը ծառայեն բոլոր շէնքերուն ելեկտրական լոյսերուն և ջուրով կամ շոգիով տաքցնող կազմածներուն, դատ շինուած այս շէնքին մէջ կը գտնուին, և ուստի ուրիշ հրդեհի մը վտանգը պակասած է:



**ՄՄՏԻՆ ԳԵՂԵՑԳՈՒԹԻՒՆԸ**

Ճշմարիտ քաղաքավարութիւնն է «սրտին դեղեցկութիւնը»: Ի՞նչ բարեբաղդութիւն, որ մասնաւոր դասակարգի մը մենաշնորհը չէ այս տեսակ ապրանքը, և թէև նպաստաւոր պարագաներ աւելի կ'ընդհանրացնեն ազնուաբարոյութիւնը բարձր դիրք ունեցողներուն քան ցած դիրք ունեցողներուն մէջ, բայց արգելք մը պէտք չէ որ գտնուի աղքատիկ դասակարգին ազնուաբարոյ ըլլալուն առջև: Օրինակ մը տանք մարդկային երկու դասակարգերէն ցուցուած ճշմարիտ քաղաքավարութեան: Օր մը երբ օրիորդ մը Լոնտոնի ծուռ փողոցներէն մէկուն անկիւնէն արտորնօք կ'անցնէր, սաստիկ մը զարնուեցաւ պատուտած հանդերձներ հագած մուրացիկ տղու մը, և քիչ մնաց որ տապալէր զանիկա Օրիորդը ամիջապէս կեցաւ, և դառնալով բաւ տղուն մեծ քաղցրութեամբ, «Շատ կը ցաւիմ որ քեզի զարնուեցայ այսպէս»: Մուրացիկ տղան շատ զարմացաւ, և վայրկեան մը օրիորդին վրայ նայեցաւ ապշած, և յետոյ իր գլխարկը հանելով ծուռեցաւ մեծ խոնարհութիւն մը ըրաւ ու ըսաւ շատ



12.000 Օսմ. ոսկի էր միայն: Համալսարանին ընթացաւարտները և զանիկա սիրող բարեկամները միաբանեցան և ստակին պակասը լցուցին, և որոշուեցաւ որ անմիջապէս սկսուի շէնքերուն շինութիւնը, որու համար 55,000 ոսկիի պէտք կար: Բայց այս գումարէն շատ աւելի հանգանակուեցաւ և շէնքերուն համար ծախուած ստակը իբր 120,000 ոսկիի հասաւ: Այս ստակին 20,000 ոսկիէն աւելին Մր. Բար.

անդամ էին: Հոն ամէն օր Սուրբ Գրոց դաս կայ, և ուսման տուրքը այնքան պզտիկ է որ աղքատ աշակերտները աւելի դիւրաւ կրնան դաստիարակութիւն ընդունիլ հոն քան աւելի մեծ հաստատութիւններու շատին մէջ: Ուսթըր, որու մօտ շինուած է Համալսարանը, 6,000 բնակիչով փոքր քաղաք մըն է Օհայո նահանգին մէջ: Այս է այն նահանգը որու կը պատկանէր հանգուցեալ Մաքինլի նախա.

զուարթ ժպիտով մը, «Ներում ե՛ս խնդրելու եմ ձեզմէ, Օրիորդ: Եթէ ուրիշ անգամ մըն ալ ասանկ նորէն դէմս ելլէք և զիս տապալէք, մէկ բառ անգամ պիտի չըսեմ:» Օրիորդին երթալէն ետքը մուրացիկ տղան իր ընկերոջ դարձաւ և ըսաւ, «Յուկոր, առաջին անգամն է որ մէկը ներում խնդրեց ինձմէ:»

ԳԵՂԵՑԻԿ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեռ մօտերս այցելեցինք Գերմանացի որբերի մը որ սիրուն ամարանոցի մը մէջ կը բնակէր իր ութ տարեկան փոքրիկ մանչուն և հինգ տարեկան աղջկան հետ: Երբ նստանք աղուոր պատրաստուած սեղանը, փոքրիկ մանչը, ձեռքերը կուրծքին վրայ ծախելով և աչքերը դոցելով, մեր առջև գտնուած կերակուրին համար շնորհակալ եղաւ մեր Հօրմէն որ երկինքն է, և խնդրեց անկէ որ օրհնէ զայն: Յետոյ փոքրիկ աղջիկը մանկական շեշտերով ըսաւ, «Տէր Յիսուս, մեր հիւրն եղիր: Եկուր և օրհնէ այս սեղանը, և՛ մեզի բարեք ըրէ:» Այս փոքրիկները իրենց բարեպաշտ մօրմէն ստրված էին թէ որո՞ւ կ'ուզէին իրենց աղօթքները: Քանի մը տեղեր, որոնց այցելեցինք Սիովտիոյ մէջ, սեղանին վրայ ամէնէն պղտիկ մանուկը կու տար գոհութիւնը, և այն անուշ, խոնարհ, պատկառոտ մանկական ձայները տակաւին յիշողութեանս մէջ կ'արթնան ճոխ և քաղցր երաժշտութեան արձագանգի մը պէս:

Կան ընտանիքներ, որոնք սովորութիւն ունին Տէրունական Աղօթքը միաբերան ըսել նախաճաշի ատեն: Մեր այցելած ընտանիքներէն մէկուն մէջ երբեմն անոր տեղ միաբերան կ'ըսէին իր. Սաղմուսը: Կիրակի առաւօտ մը, ճոխ և ուրախ շաքաթ մը վայելելէ ետև, ինչ բան աւելի յարմար և վայելուչ է: Կան ընտանիքներ որոնց սովորութիւնն է մատուցանել ըրին գոհութիւն: Այդ ալ շատ սրտաշարժ է. վասն զի ատիկա կրնայ ցուցնել թէ մենք վստահ ենք Աստուծոյ մեզի շատ մօտիկ ըլլալուն, երբ անոր գոհութիւն կու տանք, թէ և մեր շրթունքները չշարժին:

ՃԱՅ ԹՆՉՈՒՆԸ


Ճայերը կը գտնուին գրեթէ ամէն տեղ ուր բաւական ընդարձակ տարածութեամբ ջուր կայ: Վանայ լճին վրայ անթիւ են անոնք, և տեսած ենք հոն նաւավարներ որոնք անոնց կը կանչէին «Հաց, հաց» և թռչունները լսե-

լով կը թռչէին կու գային նաւը, իրենց համար նետուած հացի փշրանքները առնելու: Անոնք մեծ ընտանիք մըն են, վասն զի տասնհինգ քսան տեսակներ կը գտնուին Արգոնի ծովեզերքները, և թերևս նոյնքան կը գտնուին այս երկրին ծովերուն բոլորտիքը: Ճայի տեսակները կը դանազանին մեծութիւնով և գոյնով, բայց ունին ընդհանուր նմանութիւն մը, և ամէնն ալ շնորհալի են թէ՛ թռչելու թէ՛ ջուրին վրայ նստելու ատեն: Նշանաւոր տարբերութիւն մը կայ անոնց և հօղմանդին (գարապաթազ) մէջտեղ, որ ծովային ուրիշ թռչուն մըն է և հասարակ է վստփորի վրայ, թէ և հոգտնուի աւելի ցուրտ ամիսներուն միայն, մինչ ճայը կը մնայ բոլոր տարուան մէջ: Հողմամաղը ծանր թռչուն է. երբ ջուրին վրայ հանգչի, միայն իր գլուխը ու վիզը կը տեսնուին: Ճայը

ՃԱՓՈՆՑԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԲԱՂԱԲԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ճափոն է երկիր մը, որուն մէջ կու պիտ բառը կամ անոր համազօրը գործածելու պէտք չկայ: Այդ երկրին մէջ քաղաքավարութեան սովորոյթները կը սկսին կազմուիլ մանուկին առաջին կրթութեան հետ: Մօտերս ճանապարհորդած մէկը կը գրէ թէ ինչ տեսաւ այդ երկրին ամէնէն անձանցով մասերուն մէջ: Այն շատ բաներուն մէջ զորոնք գովելի գտաւ, ոչ մէկը աւելի հաճելի եկաւ անոր քան մանուկներու սիրուն քաղաքավարութիւնը:

Տեսայ քանի մը մանուկներ, կըսէ, որոնք դպրոցէն դուրս կ'ելլէին, և ես փողոցին զիմացի կողմը կեցայ զանոնք դիտելու համար: Դուրս ելան առանց ունէ ազմուկի, զոր կը հանեն մեր դպրոցներուն աշակերտները, այլ կը քալէին հանդալտ և խաղաղ,



թեթևուկ մը կը նստի ջուրին վրայ սուկի նման, և անոր մարմինն փոքր մէկ մասը միայն ջուրին մէջ կ'իջնէ: Ճայը զարմանալի աստիճան արագ է իր շարժումներով, Տեսած ենք տղոց օդին մէջ հացի կտորներ նետելը և ճայը կայծակի նման նետուած և անյրէպ առած է հացը վար ինկած միջոցին: Եւ թէպէտ երամին մէջ կըրնար քսան ճայ կեցած ըլլալ, երբեք չտեսանք անոնց երկուքին իրարու բախիլը հացին համար նետուելու ատեն:

Ճայերը սովորաբար իրենց բոյները կ'ընտրեն կղզիներու մէջ կամ ուրիշ տեղեր ուր մարդիկ շատ չեն երթար: Հասարակ ճայը սովորաբար երեք հաւ կիթ կ'ածէ ձիթապտղի գոյն կանաչ, թուխ պիսակներով և գիծերով, և ձագերը հաւու ձագերու պէս աղուամազով ծածկուած կ'ըլլան և միայն կամաց կամաց կը նմանին իրենց ծնողներուն:

գիրքերն ու գրատախտակները իրենց բազուկներուն ներքև:

Անոնցմէ առաջինները յանկարծակիի եկան յայտնապէս, տեսնելով որ մօրուսաւոր օտարական մը իրենց վրայ կը նայէր: Վայրկեան մը կանգ առին, և յետոյ քաղաքավարութեամբ մը զոր կ'ուզեմ կարող ըլլալ երևակայել Անգղիական քաղաքի մը կամ Ամբրիկեան գեղի մը մէջ, յետին աստիճան յարգալի խոնարհութիւն մը ըրին և յառաջ անցան: Հարկաւ ես ալ փոխարէն քաղաքավար շարժում մը ըրի անոնց քաղաքավարութեան դէմ:

Երկրորդ խումբը ևս ըրին նոյն քաղաքավարութիւնը և յետոյ, երբ աչակերտները ճակատը եկան, կանգ առին և խորին խոնարհութիւններ ըրին գոյն վրայ բոլոր գտնուողները: Յոյժ գեղեցիկ պատկեր մըն էր և քաջ կը լուսաբանէր քաղաքավարական բնութիւնը Ճափոնցիներուն, որոնք այսպէս կը վարժուին կրթուիլ մանուկ հասակէն:

Մանկիկի մը խօսքը, կամ հազիր ինքնի-  
րեն քիչ մը քալել սկսեցին առաջ,  
անոր կը սորվեցուի ձեռքը ճակտին  
տանիլ նուէր մը ընդունած ասանը:  
Ես տեսած չեմ մանուկ մը որ չընէ  
յարգանքի և երախտագիտութեան  
այս նշանը, և չյանդիմանուի մօտը  
գտնուողէ մը իր զանցառութեան հա-  
մար, և անոր չընկնուի այն:

Ուրիշ տեղ մը յանկարծ պատահե-  
ցայ երկու գեղեցիկ մանուկներու,  
որոնք դիմացէն կը մօտենային և բ-  
լորովին յանկարծակիի եկան և պա-  
տահութիւն չունէին փախչելու: Անոնց  
դէմքերէն կ'երևէր թէ շատ վախցան,  
և աւելի փոքրը իր եղբորը փաթթուե-  
ցաւ:

Ճիշդ երբ պիտի խօսէի, անոնք խո-  
րին խոնարհութիւններ ըրին այնպէս  
վայելչօրէն որ քանակաւ փարա տուի  
իրենց, և կը յուսամ թէ ապացուցած  
եղայանոնց թէ մինչև իսկ սպի-  
տակերես բարբարոս մը վտան-  
գաւոր չէ քաղաքավար եղող-  
ներու:

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԱՂՕԹԱԾՈՂՈՎ

Անգղիերէն թերթ մը կը  
պատմէ պզտիկ տղու մը վրայ,  
որ կը գործէր մութ ածխահան-  
քի մը մէջ գետնին տակ: Անոր  
գործն էր վարել շորիները ո-  
րոնք սայլերը աստիճանէն կը  
քաշէին այն տեղերը ուր հան-  
քագործները կը փորէին և կը  
հանէին սև հանքածուխը, և օր  
մը ուրախութեամբ տեսաւ որ  
իր կիրակնօրեայ դպրոցի վարժապետը  
քանի մը ընկերներով հանքը կ'իջնէր:

Առաջին անգամ մարդը չճանչցաւ  
Յակոբիկի սև պզտիկ երեսը, որ միշտ  
շատ մաքուր կ'ըլլար կիրակի օրերը:  
Բայց երբ ճանչցաւ, շատ ուրախու-  
թեամբ ընդունեց Յակոբիկի ծառայ-  
ութիւնը իբրև ուղեցոյցի բոլոր հան-  
քին մէջ: Մինչ անոնք նորէն վեր ետ  
կը դառնային դէպի օդը, Յակոբիկ  
ըսաւ, «Վարժապետ, ուրիշ տեղ մը  
ալ կայ, անկիպ ալ տեսնելու էք:» Եւ  
վարժապետը տարաւ տխուր երևոյ-  
թով քարայր մը, ուր այցելու անձը  
չուտով տեսաւ հանքածուխին մէջ  
փորուած կոշտ նստարաններ: «Ո՛հ հա-  
հուէ՛», ըսաւ Յակոբիկ, «ուր կ'ընենք  
մեր աղօթքի ժողովները, երբ հան-  
քագործները կը լեցնեն սայլերը, մենք  
երեք տղաք առիթէն յօգտուելով շատ  
անգամ հոս կը վազենք քանի մը  
վայրկեանի համար: Յետոյ Օննիկ քիչ  
մը կը կարգայ իր ծոցը կրած Աստ-  
ուածաշունչէն, և ամէնա ծունկի վրայ

կու գանք ու համառօտ աղօթք մը  
կ'ընենք, այնուհետև օրուան մնացած  
մասը շատ աղէկ կ'երթայ: Եւ ասհա,  
տես մեր հանգանակութեան տուփը»,  
աւելցուց մեծ հպարտութեամբ ցու-  
ցլնելով հանքածուխի կտորի մը մէջ  
փորուած կոշտ տուփ մը: Այսպէս խոր,  
մութ ածխահանքէն վեր կ'երէ խրնդ-  
րուածքի ձայնը, և անոնք որ երկ-  
նաւոր Հօր երեսը կը փնտռեն, հոն  
իսկ «համարձակութեամբ կը մօտենան  
չնօրհաց աթոռին:»

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԴՊՐՈՑ ՄԸ

Այս դպրոցը Լոնտոնի մէջ է, ուր  
անոր հինգ միլիոնէ աւելի բնակիչնե-  
րուն մէջ հաշմանդամ շատ մանուկներ  
կը գտնուին: Երեք տարի առաջ ութ  
այսպիսի դպրոցներ կային Լոնտոնի  
մէջ 422 աշակերտով, և խորհուրդաւ



անոնց նման ուրիշ դպրոցներ ալ բա-  
նալ, վասն զի քաղաքին մէջ տակաւին  
1,500է աւելի հաշմանդամ մանուկներ  
կը մնային: Խելօքիկ ձիով քաշուած  
հիւանդանոց կառք մը կ'երթայ ժող-  
վելու հաշմանդամ մանուկները, որոնք  
որոշեալ տեղերու մէջ կը հաւաքուին,  
իսկ անոնք որ քալելու անկարող են,  
իրենց տուներէն կ'առնուին: Կառքին  
հետ կ'երթայ հիւանդապահ մը, որ  
դպրոցը կը մնայ բոլոր օրը, և յետոյ  
մանուկները իրենց տուները կը տանի  
իրիկուան դէմ: Դասերը օրը միայն ե-  
րեք ժամ կը տևեն, վասն զի պէտք է հոգ  
տանիլ որ չափազանց չաշխատին այն  
տկար մարմինները, կը սորվին կողով  
և աթոռ հիւսել, այնպէս որ իրենց  
ապրուստը ճարելու միջոց մը ունենան:  
Կէսօրին անդարար ճաշ մը կը տրուի,  
որու համար մանուկները մէյմէկ դա-  
հեկան կը վճարեն, և անոնցմէ ոմանք  
տասնական փարա միայն: Եւ ևս կայ  
խաղալու հրապարակ մը, և մա-  
նուկները մարմնամարզով, լաւ կերա-

կուրով և հաճելի ընկերակցութիւնով  
շատ հեղ կը զարգանան առողջու-  
թեամբ: Մանուկներ, որ դպրոց բեր-  
ուած ատեն անկարող էին քալելու  
մէկ քայլ անգամ, քանի մը ամիս  
ետքը կարող եղած են պտըտիլ  
դպրոցի սրահին և խաղի հրապարակին  
մէջ: Հիւանդապահներուն, վարժա-  
պետներուն և ուրիշ բարեկամներուն  
այս դժբաղդ պզտիկներուն մատու-  
ցած ծառայութիւնը անտարակոյս  
մասնաւոր կերպով հաճելի է Աս-  
տուածային վարդապետին:

ՓՈՐՁԱՆԻ ԺԱՄՈՒՆ ՄԷՋ

Յիսուսի սէրը եթէ սրտին խորերը  
իջնէ, ամէնէն դժուարին բաները դի-  
րաւ կրելու կարող կ'ընէ: Ձգալ թէ  
մօտ է Յիսուս, հաւատալ թէ անոր  
սէրը պիտի պահէ պահպանէ մեզ  
ամէն փորձանքի մէջ, անոնք  
որոնք ստուկալի և փորձիչ ալ  
ըլլան, մեզ կարող կ'ընեն ըսել  
Դասիթի հետ, «Թէ և մահուան  
չուքի ձորին մէջ ալ պտըտիմ,  
չարէն պիտի չվախնամ:» Այս-  
պիսի սէր լեցուց սիրտը այն քաջ  
տղին որուն վրայ բժիշկ մը հե-  
տևեալը կը պատմէ:

Այս տղան իր կանուխ հասա-  
կին մէջ լեզուի ախտ մը ունէր,  
և բժիշկին մը ցուցուեցաւ: Բժիշ-  
կը զգուշութեամբ քննեց լե-  
զուն, և յետոյ տղուն մօրը  
ըսաւ առանձին. «Տիկին, ձեր  
տղուն լեզուն գէշ ախտի մը են-  
թակայ եղած է: Եթէ կ'ուզէք ազատել  
անոր կեանքը, լեզուն պէտք է հանել  
իսկոյն:» «Խեղճ մայրը յետին վշտի մէջ  
ընկղմած՝ հաւանեցաւ, և պատրաս-  
տութիւնները տեսնուեցան: Երբ ամէն  
բան պատրաստ էր, մայրը իր տղուն  
ըսաւ բժիշկին վճիռը, և քաջապէս  
զսպելով իր արցունքները և բռնելով  
վշտի արտաքին բոլոր նշանները, ը-  
սաւ, «Տղաս, բան մը ըսել կուզե՞ս.  
անկիպ քու վերջին խօսքդ պիտի ըլլայ:»  
Տղան վարանեցաւ մէկ երկվայրկեան:  
Յետոյ կուրծքին վրայ ծալելով իր  
ձեռքերը, աչքերը դէպի երկինք  
բարձրացուց, և ըսաւ յստակ և եռան-  
դազին, «Յիսուս ֆրիստոս թող փա-  
ռաբանուի:»

«ՏՂԱՅ ՄԸ ՈՐՈՒ ԿՐՆԱՄ ՎՍՏԱՀՈՎ»

Աստուծոյ մեծ դպրոց մը այցելեցի,  
ըսաւ մարդ մը: Վաղանձին ատենը  
փոքրիկ տղայ մը եկաւ և վարժապե-  
տին բան մը խօսեցաւ. և երբ ետ դար-

ձաւ, վարժապետը ըսաւ, «Ահա տղայ մը որու կրնամ վստահիլ, զիս երբեք անցնուցած չէ՛»։ Աչքովս տղուն հետեւեցայ և վրան նայեցայ երբ գնաց իր տեղը նստաւ։ Ան ունէր աղւոր, պարզ և առնական դէմք մը, երկար ժամանակ մտածեցի վարժապետին խօսքին վրայ։ Ի՞նչ նկարագիր ունեցած էր ուրեմն այդ փոքրիկ տղան։ Արդէն ստացած էր այնպիսի բան մը որ հարստութեան աւելի արժէք ունէր։ Աստիկան ամէնէն պատուական վկայականը պիտի ըլլար քաղաքին մէջ լաւագոյն պաշտօնի՛ր համար և, ինչ որ ամէնէն աղէկ է, անորդ հասարակութեան վստահութիւնը զբաւելու համար։ Երանի՛թ է տղաք զիտնային թէ մեծերը ի՛նչպէս շուտով կը ճանչնան զիրենք։ Մօտ գտնուող ամէն մէկ տղայ կը ճանչցուի թէ բարի՛ է թէ չար։ Տղայ մը, որու համար անոր վարժապետը կրնայ ըսել թէ «իս կրնամ անոր վստահիլ, երբեք զիս անցնուցած չէ՛» բնաւ առանց գործի պիտի չմնայ։ Դպրոցի մէջ ցուցուած հաւատարմութիւնը, աշխուժութիւնը և աշխատասիրութիւնը ամէն տեղ կը սիրուին։ Ան որ քիչին մէջ հաւատարիմ է, շատին մէջ ալ հաւատարիմ է։

→→→→→

ԳՏՆԵԼ ԹԷ ԻՆՉՊԵՆՍ ՍԿԱՍԵԼՈՒ Է

Երկու տղաք մէկտեղ նստած էին ալեկալական խնդիր մը լուծելու համար։ Անոնցմէ մէկը իր գրիչը ձեռքը կ'աշխատէր վայրկեանէ մը ի վեր, և տեսաւ որ իր դասընկերը նստած էր ձեռքերը ծալած և յօնքերը կնճուտած։ «Ի՛նչ կայ, ինչու չես սկսիր», սղաղակեց անոր։ «Իր մտածեմ թէ ինչպէս սկսելու եմ», պատասխանեց միւսը ամիջապէս, և նորէն շարունակեց մտածել։ Առաջին խօսողը, որ թերթ մը լեցուցած էր թուանշաններով, ինքզինք լարիւրիսթոսի մը մէջ կը տեսնէր, և կ'երևէր թէ անկէ ազատու՛մ չէր կրնար գտնել։ Եւ զրած թիւերուն վրայէն ետ ելթալով սխալ մը գտաւ առաջին հաւասարութեան մէջ։ Բայց ասկէ շատ առաջ միւս տղան լիովին կատարած էր գործողութիւնները և գտած էր շիտակ պատասխանը։ Ժամանակ վատնած չէր, վասն զի գործողութեան սկսելէն առաջ խնդրին ամէն կողմերը քննած էր։

Գործել սկսելէ առաջ լաւ մտածելով ոչ միայն անդին շատ ժամանակ կը խնայէնք, այլ նաև ազատ կը մնանք սրտի շատ ցաւերէ։

→→→→→

ԹԵԹԵՒ ԶԱՐԻԱՍԸ Կ'ԱԶԴԷ

Լրագիր մը հետեւեալը կը պատմէ, հասկցնելու համար թէ մարդ ի՛նչպէս կը սխալի ինքզինք ապահով կարծելով զօրաւոր կամք ունենալուն համար, երբ շարունակ շարին աղբեցութեան ենթակայ կ'ըլլայ։

Գործարանի մը մէջ շատ փափուկ չղձալով մը կտրուած էր հինգ հարիւր լիպրա ծանրութեամբ և ութ ոտք երկայնութեամբ պողպատէ ձող մը։ Անոր մօտիկը մետաքս գերձանով կախուած էր շիշի հասարակ սունկէ խցան մը։ Նպատակն էր ցուցնել թէ սունկը կրնայ շարժման մէջ դնել այդ պողպատ ձողը։ Աստիկան անկարելի կ'երևնար։

Սունկին շարժում տրուեցաւ մեղմով, որպէս զի որուելով զարնուէր պողպատ ձողին։ Բայց ձողը անշարժ կը մնար։

Աստիկան շարունակուեցաւ տարբարակեան, և ահա, զարեանք, տարբարակեանէն ետքը պողպատ ձողը անհանդարտութեան նշաններ ցուցուց, տեսակ մը ջղային սարսուռ անցաւ անոր վրայէն։

Յետոյ սարսուռին յաջորդեց թրթռում մը։ Կէս ժամ ետքը այնմեծ ձողը կ'օրուէր ժամացոյցի ճօճանակի պէս։

→→→→→

ՅԻՍՈՒՍԻ ՍԵՐԸ

Ի՛նչ կայ Յիսուսի մէջ որ կը քաշէ մարդիկը, որ անոնց առնչութիւնը կը կտրէ ունէ ուրիշ տերթմէ, որ զանոնք յօժար կ'ընէ ամէն բան թողուլ անոր համար և անոր հետեւի վտանգի և զոհողութեան և մինչև իսկ մահուան մէջ։ Անոր զարմանալի վարդապետութիւնն է։ «Երբեք մէկը այս մարդուն պէս խօսած չէ՛»։ Անոր զօրութիւնն է որ կը յայտնուի իր մարդասիրութիւնը տառապաններու յուզներուն մէջ։ Անոր բարեկամութիւնը չէր նմաներ ուրիշ ունէ բարեկամութեան։ Ամէնէն չարակամ բժախնդիրը պակասութիւն մը չէր կրնար գտնել անոր վրայ։ Անոր նկարագրին կատարել գեղեցկութիւնն է։ Այս ամէնուն և ոչ մէկը, ոչ ալ ամէնը մէկտեղ պատճառ են Յիսուսի գարմանալի քարշողութեան։ Սէրն է գաղտնիքը։ Ան աշխարհ եկաւ Աստուծոյ սէրը յայտնելու։ Ան էր Աստուծոյ սէրը մարդկային մարմնի մէջ։ Անոր կեանքը ամբողջ սէր էր։

→→→→→

ՍՊԱՍԷ ՈՐ ԶՈՐՆՍՅ ՏԻՎՄԸ

Հայր Պրահամ, ինչպէս գեղին մէջ ամէն մարդ կը կոչէր զանիկա, ամէնուն սիրելի էր և մեծ էր անոր աղբեցութիւնը ամէնուն վրայ։ Ինք շատ բարի և շատ գործունեայ էր։

Գեղին մէջէն երիտասարդ մը, որ օր մը շատ նախատուած էր մէկէն, եկաւ Հայր Պրահամի, սաստիկ բարկացած, և ըսաւ թէ իսկոյն պիտի երթար զինք նախատողին և ներում խնդրելու պիտի ստիպէր զանիկա, «Սիրելի տղաս», ըսաւ Հայր Պրահամ,

«տոնի ըրէ խաղաղասէր ծերունիի մը խրատը։ Նախատինքը տիգրի կը նմանի, և աւելի աղէկ կը մաքրուի երբ չօրնայ։ Քիչ մը սպասէ մինչև որ պաղիք երկուքդ ալ, և խնդրը դիւրաւ կը չեղուի։ Եթէ հիմա երթաս, միայն կուի պիտի ընէք»։ Ուրախ ենք որ երիտասարդը մտիկ ըրաւ Հայր Պրահամի խրատը, և նախատող անձը յաջորդ օրու ընէն առաջ եկաւ և ներում խնդրեց անկէ։

ԾՈՎԸ ԻՆՍՊԵՏ ՏՂԱՆ

Տը. Գործընտ Մայրս, Պրուքլինի նշանաւոր աստուածաբանը, հետեւեալ դէպքը կը պատմէ զոր իրեն նկարագրէր է նաևու վիրաբոյժ մը։

«Մեր վերջին ճամբորդութեան մէջ տղայ մը ծովէ ինկաւ նաւուն տակաւումէն։ Չհասկցայ թէ ո՛վ էր այդ տղան, և նաւազները փութացին ազատել զանիկա։ Անոնք տղան նաւուն տակաւումէն վրայ բերին։ Հանեցին անոր գուրտի հանդերձները, զանիկա դարձուցին քանի մը անգամ և շարժեցին անոր ձեռքերն ու ոտքերը։ Երբ ըրին ինչ որ գիտէին, ես օգնութեան հասայ, և անոնք ըսին թէ տղան մեռած է և յոյս չկայ։

Մէկ կողմ դարձայ ըսելէս ետքը թէ, «Կարծեմ դուք ըրիք ամէն ինչ որ կրնայիք»։ Բայց ճիշդ այն ատեն բնազդ մը ըսաւ ինձի թէ պէտք է որ երթամ և նայիմ ի՛նչ կրնամ ընել։ Գացի նայեցայ տղուն երեսը, և տեսայ որ իմ տղաս է։ Կրնար հաւատալ որ չխորհեցայ թէ վերջին բանը եղած էր։ Վերարկուս հանեցի և ծագայ տղուն վրայ։ Վրեցի անոր քթին մէջ, փչեցի բերանին մէջ, դարձուցի զանիկա կրկին և կրկին, և պարզապէս պաղապանցայ Աստուծոյ որ անոր կեանքը ետ դարձնէ։ Եւ չորս երկար ժամեր գործեցի այսպէս, մինչև որ, ճիշդ արևուն մարը մտնելու ատենը, սկսաւ տեսնուիլ շունչին ամենատար մէկ թրթռումը որ նշան էր թէ տղաս դեռ կ'ապրի։ Ո՛հ, ես երբեք պիտի չտեսնեմ ուրիշ տղայ մը առանց անմիջապէս հանելու իմ վերարկուս, և զանիկա ազատել ջանալու, այնպէս որպէս թէ գիտնայի թէ անիկա իմ տղաս է։

Տարեկան բժշկանորդական 6 դաս. արծաթ կանխիկ, ամէն տեղաւոր համար։

Ամերիկացի Միտիանայաց ընկերութեան կողմէն Արտուստէր ձ. Բ. ԿԻՒՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԻՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՏԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՅՈՒՅՅԱՆ  
Ֆինանսընթր Եօգու շու. Ամերիկան խան